

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ(°)

ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊՍԱՆ ԱՐԲԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆԻ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊՍԱՆ. ծնած է 1874 Սեպտ. 14-ին (Հ. Տ.) Նիկոմիդիոյ վիճակին Պարտիզակ գիւղը (Կ. Պոլսէն 8 ժամ հեռի), եւ մկրտուելով տեղւոյն Ս. Յակոբ Եկեղեցին կոչուած է Մկրտիչ: Մոտորը եղած են Պաշերես եւ Մարիամ, երկուքն ալ հանգուցեալ այժմ, որոնց եօթը զաւակներուն հինգերորդն է եղած:

Հինգ տարեկանին սկսած է դպրոց յաճախել գիւղին Ներսէս-Շուշանեան կոչուած Ազգ. Նախակրթարանին մէջ, որուն ընթացքը աւարտած է 1890-ին: Ամբողջ տասնեւմէկ տարիներ (1880-1890) այդ դպրոցին տեսչութիւնը եւ ուսումնապետութիւնը վարած է իրօտաղէմի Հոգեւոյն Պատրիարքը Դուրեան Սրբազան, Քորյամ Սրբազանի առաջին ուսուցիչը, որուն յետոյ պիտի աշակերտէր Նաեւ Արմաշի մէջ:

1890 Հոկտ. 15-ին իբր աշակերտ կ'ընդունուի Արմաշու Դպրեվանքին ուսումնարանը, որուն Վերատեսուչն էր Մաղաքիա Եպս. Օրմանեան, եւ նոր Փոխ-Տեսուչ կարգուած էր Եղիշէ Վրդ. Դուրեան:

Դպրեվանոց ուսանողութեան կանոնական վեցամեայ շրջանը կ'աւարտէ յաջորդութեամբ, հետգնեմէ ստանալով եկեղեցականութեան աստիճանները: Նախապէս (1888 Մայիս 17-ին) Պարտիզակի մէջ, Վիճակին առաջնորդէն արդէն ընդունած լինելով դըպրուրեան չորս աստիճանները՝ յետոյ Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի տաճարին մէջ յաջորդաբար կը ստանայ, կիսասարկաւազութեան աստիճան՝ 1893 Սեպտ. 23-ին, սարկաւազութեան՝ Սեպտ. 26-ին, իսկ երեք տարի ետքը, 1896 Սեպտ. 15-ին՝ քահանայութեան աստիճան եւ արեղայութեան վեղար, ձեռնադրութեամբ Տ. Մաղաքիա Եպս. Օրմանեանի եւ խարտաւիպակութեամբ Տ. Եղիշէ Մ. Վրդ. Դուրեանի, որոնք երկուքն ալ եղած են իր տեսական եւ բուն ուսուցիչները:

1897 Դեկտ. ամսուան մէջ ուսուցիչ կը կարգուի Դպրեվանքի Ուսումնարանին մէջ Հայերէնի եւ Ծրանսերէնի:

Նոյն տարւոյ Դեկտ. 21-ին, Կ. Պոլսոյ Կէտիկ Փաշա արուարծանի Ս. Յովհաննէս Աւետարանիչ Եկեղեցւոյ մէջ վարդապետական մասնաւոր իշխանութեան չորս աստիճանները կը ստանայ Պատրիարք Մաղաքիա Արքեպս. Օրմանեանէ, վկայականաւ ազգ. ուսմանց, եկեղեցական եւ կրօնական գիտութեանց եւ ուսուցչութեան ի նստին:

1898 Օգոստոսին կը կարգուի Փոխ-Տեսուչ Ուսումնարանի Դպրեվանոց:

1899-ին կ'ընդունի, Օրմանեան Պատրիարքէ, արտօնութիւն մանիշակագոյն փիլիւնի, 1902-ին, Արմաշու տաճարին մէջ, Դպրեվանքի Վերատեսուչ Դուրեան Եղիշէ Սրբազանէ կը ստանայ վարդապետական իշխանութեան տասը ծայրագոյն աստիճանները, 1903 Մարտ 25-ին, Ամենայն Հայոց Հայրապետ Խրիմեան Հայրիկէ՝ արտօնութիւն վարդապետական ականակուռ լանջախաչի, 1904 Հոկտեմբերին կը կարգուի Վանահայրական Փոխանորդ եւ Վերատեսուչ, եւ 1906-ին (Սեպտ. 6) Լիազօր Փոխ-Վանահայր Արմաշու Դպրեվանոց, յաջորդելով Դուրեան Եղիշէ Սրբազանի, որ ընտրուած էր Առաջնորդ Զմիւռնիոյ:

1907 Օգոստոսին կ'ընտրուի Առաջնորդ Սեբաստիոյ, միաձայնութեամբ: 1908 Հոկտեմբեր 13-ին, իբրեւ հոգեւորական պատգամաւոր Սեբաստիոյ՝ կը մասնակցի էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան:

(*) Կենսագրական այս նօթերը, գրւած ուղղակի Հոգեւոյն Պատրիարքին ձեռնով յոյս ձեռած են Սիմօն 1931 Յուլիսի թիւի մէջ: Կը վերահասարակեմ զանո՞մ թեթեւ հպումներով եւ փոփոխ յաւելումներով:

1910 Սեպտեմբ. 19-ին էջմիածնի Մայր Տաճարին մէջ ծնունդորութիւն կը ստանայ Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոս Իգմիրեանէ՝ Դանիէլ Յակոբեան, Ստեփան Աղազատեան, Եփրեմ Սուքիասեան, Մկրտիչ Աղանունի, Կարապետ Մազլման, Բաբգէն Կիւլէսէրեան, Զաւէն Տ. Նոյնսեան, Սմբատ Սաստիկեան եւ Խորէն Մուրատբէգեան վարդապետներու հետ։ Այս առթիւ էր որ Հոկտեմբերի սկիզբները կ'այցելէ Անի, ուր եպիսկոպոսական երկրորդ պատարագը կը մատուցանէ Բագրատունեաց ոստանի Մայր Եկեղեցիին մէջ։

1911 Յունիսին, Ազգ. Պատրիարքարանի կողմէ կը դրուի քննիչ Շապին Գարահիսարի վիճակին, ուր կը մնայ երեք ամիսներ, վերակազմելով տեղւոյն ժողովները եւ կանոնաւորելով Առաջնորդարանի գործերը։

1911-ի Դեկտեմբերին դարձեալ կ'երթայ էջմիածին, մասնակցելու Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան։

1913-ին (Օգոստ. 26) կը հրաժարի Սեբաստիոյ Առաջնորդութենէն եւ կը մեկնի Կ. Պոլիս, ուր իբր հիշգրտման քարոզչութեան պաշտօն կը վարէ Մաքրի Գիւղի Եկեղեցին։ Այդ միջոցին գրեթէ միաժամանակ կ'ընտրուի Առաջնորդ՝ Եօզաւտէ եւ Տիգրաւակներուն, եւ յետոյ Տեղապահ՝ Վանէ եւ Եգիպտոսէ։

Պատրիարքարանի հաւանութեամբ կ'ընդունի Եգիպտոսի Տեղապահութիւնը, եւ Գահրէր կը հասնի 1914 Մայիս 1-ին (Ն. Տ.). իսկ Յունիս 28-ին Եգիպտոսի Առաջնորդ կ'ընտրուի միաձայնութեամբ Պօղոս Փաշայի փափաքին եւ յանձնարարութեան համեմատ։

1916 Սեպտեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Գէորգ Ե. զինք կը կարգէ Պատուիրակ Ամբրիկայի Հայութեան, բայց տակաւին այդ պաշտօնին լծեալարկած՝ Ն. Վեհափառութենէն Նուիրակ կը կարգուի Հնդկաստանի, Պիրմանիոյ, Ճափայի, Եթովպիոյ եւ Սուտանի։ Նոյն տարւոյ Նոյեմբերին կը մեկնի Հնդկաստան, եւ տասնեւութ ամիսներ հոգեւոր այցելութեամբ կը շրջի Անգլիական Հնդկաստանի, Պիրմանիոյ, Մալայեան ցամաքակղզիի, Ճափայի, Մելլէպէսի, Սումատրայի հայաբնակ քաղաքները, ուր կը կատարէ հանգանակութիւն ի նպաստ ազգին եւ կը կազմակերպէ Հ. Բ. Ը. Միութեան մասնաճիւղեր։

1918 Մարտին, Հնդկաստանէ վերադարձին, Բրիտ. Զինուորական Իշխանութեան հրաւերով կ'երթայ Երուսաղէմ, քրիստոնէական հովանաւորութեան ներքեւ կատարուելիք առաջին Զատիկի տօնին ներկայ գտնուելու համար. այդ միջոցին էր որ ողբ ի բռին աշխատած է՝ հակառակ Յունաց ջանքերուն իրաց վիճակը ի նորոգութեան պահելու համար Երուսաղէմի Սրբատեղեաց ազգ. իրաւանց խնդրոյն մէջ։

1921-ին Երուսաղէմ կ'երթայ իբրեւ պատգամաւոր Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի, ներկայ գտնուելու համար Եղիշէ Սրբազան Դուրեանի պատրիարքական գահակալութեան։

1929 Օգոստոսին Ամենայն Հայոց Հայրապետէն կը նշանակուի Լիւազօր Ներկայացուցիչ Եւրոպայի Հայոց Թեմին, եւ ամբողջ ութ ամիսներ կը շրջի Ֆրանսայի, Անգլիոյ, Պելճիքայի, Զուիցերլոյ, Իտալիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ, Հունգարիոյ, Չեխոսլովակիոյ եւ Եուկոսլավիոյ հայաբնակ քաղաքները. կ'ուսումնասիրէ Եւրոպահայ Թեմի կազմակերպութեան գործը եւ ընդարձակ Տեղեկագրով այդ մասին իր տեսութիւնները կը ներկայացնէ էջմիածին։ Այդ միջոցին Թաւադարաբար Լոնտոնի մէջ կը զբաղի Աբգարեան հիմնադրամի բարդ խնդրով եւ յաջողութեամբն Աստուծոյ կը կարգադրէ զայն։

1930 Ապրիլի վերջերս կը վերադառնայ Եգիպտոս, ուր կը մնա՝ պահելով իր վրայ Հայրապետական Պատուիրակի պաշտօնը, երբ 1931, 6 Յունիսին ընտրուեցաւ Պատրիարք Երուսաղէմի։ Նոյն տարւոյ Դեկտ. 1ին կը բազմի յԱթոռ Առաքելական Սրբոյն Յակոբայ։

* * *

Թորգոմ Սրբազանի վարչական գործունէութեան մէջ ամէնէն աւելի նշանակելի եւ արդիւնաւոր իրողութիւնները եղած են. ա) Արմաշի մէջ Օրմանեանով սկսած եւ

Դուրեանով պայծառացած գործին շարունակումը եւ այդ հաստատութիւնը ինքնաբաւ մատակարարութեան ճամբուն մէջ դնելու իր քանքերուն յաջողութիւնը. բ) Սեքսստիոյ մէջ, չորս բարեգործական մեծ հաստատութեանց առաջնորդարանի հետ յարաբերութեանց կանոնադրեալ սահմանաւորումը, որ բազում հին վէճերու վերջ դրած է. կըրթական գործին պայծառացումը, Սանասարեան Վրժ.ի Սեքսստիա փոխադրութեան յաջողութիւնը եւ այդ առթիւ Ս. Նշան Վանուց նորոգութիւնը, եւայլն. գ) Եգիպտոսի մէջ ինքեան կտակին իր վերջնական ձեւին վերածումը, Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի մէջ կըրթական գործին բարգաւաճանքը, մասնաւորապէս այն տարիներուն՝ երբ կուսակցական ազդեցութիւնը դեռ չէր տիրակալած ազգ. շրջանակէն ներս, Գահիրէի նոր եկեղեցիին եւ Առաջնորդարանին եւ Հելիոպոլսոյ Նուպարեան Վարժարանին, Աղեքսանդրիոյ գերեզմանատան մատրան եւ քաղաքի եկեղեցւոյ յառաջամասին, ինչպէս նաեւ Միլլոնեան Մանկապարտէզին եւ Զակազիկի եկեղեցւոյ շինութեանց առթիւ իր տարած աշխատութիւնները, պատերազմի տարիներուն Բորո-Սայիդի գաղթականյանին եւ յետոյ ընդհ. հանգանակութեան համար թափած քանքերը. դ) Հնդկաստանի մէջ, հեռաւոր այդ գաղութին հոգւոյն խորը ազգ. ոգւոյ վերարծարծումը եւ Բարեգործականի ճիւղաւորումը. ե) իսկ վերջին անգամ Եւրոպայի ցրուած հայութեան մէջ Հայ Եկեղեցւոյ սիրոյն արծարծումը եւ ազգ. ոգիին վերակենցաղումը:

Թորգոմ Սրբազան զիտէ Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն եւ Անգլերէն: Արմաշու Դպրեվանքին մէջ, նախ՝ Դուրեան Սրբ.ի վերատեսչութեան օրով, եւ յետոյ՝ աւոր մեկնելէն վերջ, տասներկու տարի հետզհետէ դասախօսած է հայերէն (գրաբար եւ աշխարհաբար), ֆրանսերէն, գրագիտութիւն, պատմութիւն դասական գրականութեանց, մեկնութիւն Ս. Գրոց, փիլիսոփայութիւն, պատմ. հայ մատենագրութեան եւ աստուածաբանութիւն:

Դասախօսական առիթներով, կամ անկախաբար, աշխատասիրած է, բացի բազմաթիւ դրական բանասիրական եւ փիլիսոփայական թարգմանութիւններէ ի ֆրանսերէնէ, Ղուկասու եւ Յովհաննու աւետարաններուն եւ Թործք Առաքելոցի վրայ ներածական մենկաբանութիւններ: Թարգմանած է Փոնսկրիվի Հոգեբանութիւնը, եւ Հանրի Մարիոնի Մանկավարժական Հոգեբանութիւնը: Ճուպէռի Հեռովդիան, Պուլալոյի Արուեստ Բեքրոզականը, (ա. թրգ.): Սեքսստիոյ մէջ գրի առած է բոլոր գիւղերուն ընդհանուր եւ ընդհանրական վիճակագրութիւնը, եւ Շապին Գարահիսարի եւ Անեղիի եւ Թամզարայի վիճակագրութիւնը: Եգիպտոսի մէջ գրած է Ամուսնական Կանոնագրութեան Նախագիծ մը. իր եգիպտական պաշտօնավարութեան մանրամասնեալ Օրագրութիւնը, Բրիտանական հովանաւորութիւնէն սկսեալ (1914) մինչեւ Զմիւռնիոյ աղէտը (1921), որ տեսակ մը կենդանի պատմութիւնն է Եգիպտոսի ազգ. կեանքին: Եգիպտոսի մէջ գրած է նոյնպէս իւրեմեան Հայրիկ ուսումնասիրութիւնը, Աւեստանի ձմաբէն կրօնական երկը, Նաբեկի աւարհաբար բարգմանութիւնը, ներածութեամբ եւ ծանօթութիւններով, եւ Սգիպօսի հին եւ առիկ եկեղեցիներուն մասին զբոյրի մը, նորակերտ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութեան պատմութիւնը: Հուսկ՝ Դուրեան Սեդեք Մեքազանի վրայ ընդարձակ կենսագրական ուսումնասիրութիւն մը: Բացի ասոնցմէ, որոնք տպուած են, ունի հրատարակելի, այսինքն պատրաստ, Հնդկահայոց վրայ ընդարձակ գրուածք մը, Յոբայ Գրքին աւարհաբար տալաչափեալ ձեւը, եւ Յուսադէմի մասին յօդուածաշարք մը:

Իսկ իր պատրիարքութեան ընթացքին թարգմանեց Corneilleի Պոլիկսոսը, պատրաստեց Աստուածաշունչի 1500 ամայ յորելիական հանդիսութիւնները յաւերժացնող Յուսաբանքը: